ՍՈՑԻԱԼ–ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՏԱԹԵՎԻԿ ՎԱԹՅԱՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի հայցորդ
vatyantatevik@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-115

Համառոտագիր

Թեև տարիներ շարունակ գրականության մեջ ուսումնասիրվել է «օտարում» հասկացությունը, սակայն այն իր արդիականությունը պահպանող թեմա է: Այս հոդվածն անրադառնում է օտարման հայեցակարգին, նշանակությանը՝ ուսումնասիրելով պատմական զարգացումը, պատճառներն ու հետևանքները միջավայրի ազդեցության համատեքստում: Օտարումը, որը բնութագրվում է անհատի կողմից իր շրջապատի և սեփական անձի նկատմամբ հավատի կորստով, հանգեցնում է խորը միայնության և հուսահատության, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով դարձել է սպառնացող խնդիր անձի համար: Հոդվածում թեմայի շուրջ տեղ գտած մեկնաբանությունները տալիս են որոշ հարցերի պատասխաններ, սակայն լրջագույն հետազոտությունները դեռևս անելիքներ ունեն ժամանակ առ ժամանակ արդիականություն ունեցող այս թեմայի վերաբերյալ: Աշխատանքում տեղ են գտել օտարման տեսության պատմական զարգացումները՝ ներառյալ արդի ժամանակաշրջանը, պատճառներն ու հետևանքները:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ օտարում, հեռացում, մեկուսացում, հուսահատության, միայնության:

THE CONCEPT OF SOCIO–PSYCHOLOGICAL ALIENATION

TATEVIK VATYAN

International Scientific Educational Centre of the
National Academy of Sciences of the RA, Applicant
vatyantatevik@gmail.com

Abstract

Although the concept of alienation has been studied in the literature for many years, it remains a topic of enduring relevance. This article examines the concept of alienation and its significance, exploring its historical development, causes, and consequences in the context of environmental influence. Alienation, characterised by an individual's loss of faith in their surroundings and themselves, leads to deep loneliness and despair, which has become a significant problem for the individual.

The comments on the topic presented in the article provide answers to some questions; however, further serious research is still needed. The work encompasses the historical development of the theory of alienation, including its modern period, its causes, and its consequences.

Keywords and phrases: Alienation, removal, isolation, despair, loneliness.

КОНЦЕПЦИЯ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОТЧУЖДЕНИЯ

ТАТЕВИК ВАТЯН

Соискатель Международного научно-образовательного центра
Национальной академии наук Республики Армения
vatyantatevik@gmail.com

Аннотация

Хотя концепция отчуждения изучается в литературе уже много лет, эта тема сохраняет свою актуальность. В статье рассматривается понятие отчуждения, его значение, рассматривается его историческое развитие, причины и последствия в контексте влияния окружающей среды. Отчуждение, характеризующееся утратой человеком веры в свое окружение и самого себя, приводит к глубокому одиночеству и отчаянию и становится угрожающей проблемой для человека из-за событий, происходящих в современном мире. Комментарии по теме статьи дают ответы на некоторые вопросы, но по данной теме еще предстоит провести серьезные исследования, которые время от времени становятся актуальными. Работа включает в себя историческое развитие теории отчуждения, включая современный период, причины и последствия.

Ключевые слова: отчуждение, удаление, изоляция, отчаяние, одиночество.

«Օտարում» հասկացություն

Օտարում բառն առաջացել է լատիներեն «alienare» բայից, որը նշանակում է վերցնել, հեռացնել կամ տարանջատում առաջացնել:

Սոցիալ-հոգեբանական օտարումը բարդ հիմնախնդիր է, որն իր մեջ ներառում է մարդու սոցիալական, մշակութային և հոգեբանական ընկալումները, ինչպես նաև անհատի և հասարակության միջև կապը: Հիմնականում, օտարումը կարող է հանգեցնել արժեքների, պահանջմունքների և վերաբերմունքի փոփոխությունների, որոնք կարևոր դեր են խաղում անհատի ինքնության ձևավորման և սոցիալական ինտեգրման գործընթացներում **[14]**:

Տեսական մաս

Ըստ Ջ. Ռահելի, օտարում նշանակում է անտարբերություն, անզորություն սեփական անձի և անտարբեր ու օտար աշխարհի հանդեպ: Օտարումը այլ մարդկանց, սոցիալական ինստիտուտների, իրերի և, հետևաբար, նաև սեփական անձի հետ հարաբերություններ հաստատելու անկարողությունն է:

Օտարված աշխարհն անհատներին ներկայանում է որպես անիմաստ, որպես կոշտ աշխարհ, որը իրենցը չէ, այսինքն՝ աշխարհ, որտեղ մարդը «տանը» չէ, և որի վրա մարդը որևէ ազդեցություն չի կարող ունենալ **[14]**: Օտարված սուբյեկտը դառնում է օտար ինքնիրենից. նա իրեն զգում է ոչ թե որպես «ակտիվ և արդյունավետ սուբյեկտ», այլ որպես «պասիվ օբյեկտ» անհայտ ուժերի ներքո: Ինչպես ասել է Հայդեգերը «օտարման մասին տեղին է խոսել, երբ անհատները չեն գտնում իրենց սեփական գործողությունները, կամ երբ չեն կարող տիրապետել իրենց էությանը»: Օտարված անձը, ըստ Ա. Մաքինթայրի, «անծանոթ է աշխարհում, որն ինքն է ստեղծել» **[14]**:

Ըստ Ռուսոյի մեկնաբանությունների՝ մարդ օտարվում է ինքնիրենից այնքանով, որքանով իրեն չի պահում այնպես, ինչպես «իրականում», այլ «արհեստական» և «ոչ իսկական» կամ այնքանով, որքանով առաջնորդվում է ցանկություններով, որոնք որոշակի առումով սեփականը չեն: Այդ ժամանակ «մարդն ապրում է ուրիշների կարծիքներով, այլ ոչ իր սեփական»:

Օտարումը կարող է վերաբերել նաև սոցիալական ներգրավվածության բացակայությանը: Այս առումով մարդը կարող է օտարվել իր կյանքի ընկերոջից կամ ընտանիքից, իր ծննդավայրից, համայնքից, մշակութային միջավայրից: Մասնավորապես՝ օտարման մասին խոսվում է, երբ մարդը չի կարող նույնականանալ սոցիալական կամ քաղաքական ինստիտուտների հետ, որտեղ նա ապրում է **[19]**:

Օտարման տեսության համառոտ պատմություն

Օտարման ժամանակակից տեսության համառոտ պատմությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Նույնիսկ տերմինի ինքնին բացակայության դեպքում Ռուսոյի ստեղծագործությունները պարունակում են բոլոր այն հիմնական գաղափար–ները, որոնց վրա հիմնվել են օտարման տեսությունները (սոցիալական, հոգեբանական, փիլիսոփայական իմաստներով), ինչպես անցյալում, այն–պես էլ ներկայում **[28]:** Ռուսոն սկսում է իր «Դիսկուրսը մարդկանց միջև անհավասարության ծագման մասին» տպավորիչ պատկերով. «Ինչպես Գլաուկոսի արձանը, որը ժամանակն ու ծովն ու փոթորիկները այնքան էին այլանդակել, որ ավելի քիչ էր նման Աստծուն, քան կատաղի գազանի... մարդու կյանքում տեղի ունեցած փոփոխությունները մարմնի կառուցվածքի արտաքի մակարդակով փոխել են գրեթե անճանաչելի լինելու աստիճանի»: 11 Ռուսոն խոսքը հասարակության կողմից խեղաթյուրված գործողությունների մասին է, որը մարդկանց տանում է դեպի դեֆորմացիա. իր էությունից հեռվացած, սեփական կարիքներից օտարված, հասարակության կոնֆորմիստական թելադրանքին ենթարկված, ճանաչման կարիք ունեցող և ուրիշների կարծիքից կախված սոցիալական մարդը արհեստական է: Ռուսոն խոսում է իսկության կորստի և ինքնաօտարման մասին **[28]:**

Օտարման հայեցակարգը

«Օտարում» տերմինը բխում է Մարքսի ուսումնասիրությունից, թե ինչպես է կապիտալիստական աշխատանքային գործընթացը ազդեցություն ունենում աշխատավորների վրա: Դրա ծագումնաբանությունը կարելի է գտնել արտաքին աշխարհի փոփոխությունների ազդեցության արդյունքում

առաջացած արդյունաբերական գործընթացից՝ խոշոր գործարանների ստեղծմամբ, որոնք բնութագրվում են կազմակերպչական հիերարխիաներով և աշխատանքային վերահսկմամբ՝ հիմնված պաշտոնական լիազորությունների վրա **[15, 26]:**

Օտարումը կապված է անհատի հուսահատության և միայնության հետ: Ընդհանուր առմամբ, օտարում հասկացությունը կարող է սահմանվել որպես անհատի ներդաշնակության նվազում իր սոցիալական, մշակութային միջավայրից՝ առաջացնելով միայնություն և հուսահատություն: Բառացիորեն օտարումը դա անհատի մեկուսացումն է միջավայրից, գործընթացից և սեփական անձից **[27]:**

Օտարումը կարող է սահմանվել որպես օտարության զգացում այլ մարդկանցից, հասարակությունից և նրա արժեքներից և սեփական ես-ից: Ըստ Ֆրոմի՝ օտարումը ժամանակակից ամենալուրջ խնդիրն է: Թեև այն պայմանավորված է սոցիալական գործոններով, այնուամենայնիվ, այն տեղի է ունենում անձի ներսում: Այն խմբերը, որոնք համարվում են հասարա-կությունից օտարված, տուժում են, քանի որ չեն կարողանում գիտակցել կամ դրսևորել իրենց անհատական որակները, թեև դրանք համահունչ են սոցիալական արժեքային համակարգին: Երկու իրավիճակներն էլ հանգեցնում են հասարակությունից օտարման և կոչվում են ինքնաօտարում **[10, 11]:** Օտարման նշաններ են՝ օտարվածություն, անտարբերություն, հեռացում, հարաբերություններում անջատում և մեկուսացում: Սիմենը դիտարկեց օտարումը սոցիալ-հոգեբանական տեսանկյունից և առաջարկեց հինգ հարթություն՝ անզորություն, անիմաստություն, նորմերի անհամապա-տասխանում, մեկուսացում և ինքնաօտարում: Այս տեսակետը հակիրճ նկա-րագրված է ստորև **[23]**.

Անզորություն. Ըստ Սիմենի՝ անզորության տեսքով օտարումը առաջանում է անհատի անբավարարվության զգացումից՝ աշխատանքում անարդյունավետ լինելու պատճառով, կազմակերպչական քաղաքականության և աշխատանքային պայմանների նկատմամբ սեփական վերահսկողության բացակայությամբ: Անզորությունը բացասական զգացողություն է, որի դեպքում անհատն ի վիճակի չէ ինքնուրույն իրականացնելու կազմակերպչական գործունեություն կամ որոշումներ կայացնել:

Անիմաստություն. Անիմաստությունն առաջանում է, երբ հակասություն կա նպատակների և անձնական դերերի միջև: Այն կարող է դիտարկվել որպես անհատի և հասարակության միջև անհավասարակշռություն՝ արժեքապահանջմունքային համակարգի փլուզման հետևանքով **[24]:**

Մեկուսացում. Մեկուսացումն անհատի՝ իր միջավայրից մեկուսանալու և որևէ խմբի կամ համայնքի չպատկանելու զգացում է, և դա դրսևորվում է երկու ձևով. Նախ՝ անհատն իրեն մերժված կամ անցանկալի է զգում խմբի կողմից, երկրորդ՝ անհատը մերժում է այն միջավայրը կամ մարդկանց խումբը, որին նա պատկանում է: Անհատները չեն կարողանում ընկերներ ձեռք բերել, դժվարությամբ են շփվում մարդկանց հետ և հեռանում են իրենց սոցիալական միջավայրից **[23, 24]**:

Ինքնաօտարում. Շեշտը դրվում է այն փաստի վրա, որ անհատները հաճույք չեն ստանում իրենց կատարած աշխատանքից և իրենց աշխատանքը

հետաքրքիր չեն համարում: Նրանք չեն կարող որևէ կապ հաստատել ցանկալի և իրական աշխատանքի միջև: Նրանք չեն կարողանում զգալ հաջողությունից բխող երջանկության զգացում **[23, 24]**:

Կոնֆլիկտներ. Կոնֆլիկտը լարված իրավիճակ է, որն առաջանում է ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական կարիքների բավարարմանը խոչընդոտող դժվարություններից: Այն դրսևորվում է տարբեր ձևերով. կոնֆրոնտացիա, հանդուրժողականություն, փախուստ իրավիճակից, պասիվ դիմադրություն: Կոնֆլիկտներ կարող են առաջանալ հաղորդակցման խնդիրներից, կազմակերպչական կառուցվածքից և անհատական վարքագծից, անձնային որակներից, որոնք կարող են հանգեցնել բնականոն գործունեության խափանումների և խթանել օտարումը **[2]:**

Օտարման պատմական զարգացումը

Օտարման պատմական զարգացումը ձևավորվել է տարբեր ժամանակաշրջանների ազդեցիկ մտածողների և գիտնականների հայացքներով և մոտեցումներով: Այս բաժնում կմանրամասնենք օտարման երևույթի էվոլյուցիան անցյալից մինչև արդի ժամանակաշրջան:

1. Նախահեգելյան ժամանակաշրջան

Ենթադրվում է, որ օտարում հասկացությունն առաջին անգամ հայտնվել է նախահեգելյան ժամանակաշրջանում: Ենթադրվում է, որ մարդու բնական հակումները, նրա զարգացումը և մարդկային հարաբերությունները սկսվում են կուռքերի, տոհմերի և թագավորների պաշտամունքից: Արևմուտքում «օտարում» հասկացությունն առաջին անգամ ի հայտ եկավ կռապաշտության համատեքստում Հին Կտակարանում: Մարդը օտարել է իր ուժն ու ներուժը՝ իր հետ կապված հատկանիշները առարկաներին փոխանցելով, և իր գոյությունը կարևորելու փոխարեն կռապաշտության միջոցով հարաբերություններ էր հաստատում **[19, 14]**:

2. Հեգելի ժամանակաշրջան

Հեգելն այն փիլիսոփան էր, ով խոսել է օտարման հայեցակարգի մասին առավել մանրամասն և առաջին անգամ՝ մեր ժամանակներում գործածվող գաղափարի ձևաչափով: Ըստ նրա՝ մտքի գործընթացն առաջնորդվում է «Գեյստով»՝ ինքնավար սուբյեկտով: Օտարումը սկսվում է այն ժամանակ, երբ Գեյստը չի կարողանում հասկանալ, որ աշխարհն իրենից դուրս գոյություն չունի: Օտարումն ավարտվում է այն պահից, երբ անհատը ձեռք է բերում ինքնագիտակցություն, հասկանում է, որ իր միջավայրի մշակույթը պայմանավորված է Գեյստով: Այս համատեքստում Հեգելը օտարումը սահմանում է որպես անհատի գիտակցելու անկարողություն, որ իրեն շրջապատող առարկաները Գեյստի արդյունքն են: Մարդը հեռավորություն է ստեղծում իր գոյության և իր հոգևոր իրականության միջև: Այս իրավիճակն առաջանում է նրանից, որ Գեյստը, չնայած ինքն իր և ինքնագիտակցության միասնությունն է, կրում է օտարման նշան: Այս գործընթացում, երբ մարդն առաջ է գնում դեպի ազատության, նրա առաջ նոր խոչընդոտներ են հայտնվում, և նա հանդիպում է նոր սահմանների: Այդ իսկ պատճառով Հեգելը պնդում է, որ օտարումը բնական գործընթաց է, քանի դեռ գոյություն ունի մարդը, կա հասարակություն և գործընթացներ, գոյություն կունենա նաև օտարումը **[19]**:

Օտարման մյուս պատճառն այն է, որ յուրաքանչյուր մարդ, վերարտադրում է իր մտքում գոյություն ունեցող գաղափարները: Այս իրավիճակը ստիպում է մարդուն առանձնանալու և անկախանալու առարկաների աշխարհից: Այս համատեքստում Հեգելը պնդում է, որ օտարումն անխուսափելի գործընթաց է: Օտարման այս պատմական էվոլյուցիայում երևում է, որ այն հայտնվել է կրոնական համատեքստում նախահեգելյան ժամանակաշրջանում, իսկ հեգելյան ժամանակաշրջանում այն խորացել է մտքի գործընթացի և «գեյստի» հայեցակարգերի հետ: Մտքի այս հոսանքները բացատրում են, թե ինչպես է օտարումն ընկալվում որպես մարդու ազատության և իմաստի ընկալման սպառնալիք:

3. Մարքսի ժամանակաշրջան

Մարքսը, որ կրել է Հեգելի ազդեցությունը օտարման հայեցակարգը բացատրելիս, նախ դիտարկեց այս հայեցակարգը փիլիսոփայական շրջանակում, այնուհետև կենտրոնացավ «օտարումը աշխատանքում» հասկացության վրա: Մարքսն ուսումնասիրել է օտարումը, որպես մարդու օտարումն իր անմիջական շրջապատից և այլ մարդկանցից: Սակայն Մարքսի աշխատություններում օտարում հասկացությունը սովորաբար նշվում է «աշխատանքային» իմաստով: Այդ իսկ պատճառով Մարքսն ընդգծում է, որ արդյունավետ արտադրության համար անհատը և հասարակությունը պետք է հաղթահարեն երկու կողմերից օտարման գործընթացը **[12, 15]**: Մարքսի օտարման հայեցակարգի համառոտ ուսումնասիրությունները ստորև:

Մարքսը աշխատանքային գործընթացն ընդհանրապես տեսնում է ոչ միայն որպես դրա նյութական համարժեքը, այլ նաև որպես գործունեության ամբողջություն, որը ներառում է աշխատողի ստեղծագործական կարողությունը և մտավոր ներուժը: Կապիտալիստական համակարգում աշխատողը հայտնվում է այնպիսի իրավիճակում, որտեղ նա որևէ ազդեցություն չունի այնպիսի գործունեության վրա, ինչպիսին են նպատակներ դնելը և արտադրությունն ավարտին հասցնելը: Աշխատողը չի կարող իմաստավորել իր կատարած աշխատանքը և, ըստ այդմ, օտարվում է աշխատանքային գործընթացից **[12]**:

Մարքսի կարծիքով՝ կապիտալիստական համակարգի ներսում աշխատողը չի կարող վերահսկողություն հաստատել իր աշխատանքի և արտադրանքի վրա: Նրա համար աշխատանքն ու արտադրանքը հետզհետե օտարացնող իրավիճակ են ստեղծում: Աշխատողն իր ֆիզիկական և մտավոր ողջ աշխատուժը չի կարող ամբողջ կարողությամբ օգտագործել աշխատանքային գործընթացում:

Մարքսի հաջորդ գաղափարը մարդու օտարումն է բնությունից: Մարդու և բնության փոխհարաբերություններում բնությանը տիրելու և այն փոխելու մարդու կարողությունը օտարման ևս մեկ պատճառ է:

Մարքսի հաջորդ տեսակետը մարդու օտարումն է սեփական անձի նկատմամբ: Աշխատողը, որ չի կարող օգտագործել իր ստեղծագործական ներուժը կապիտալիստական համակարգի ներսում, գնալով ավելի է օտարվում սեփական գոյությունից **[19]:**

Բացատրելով օտարման ծագումը կապիտալիստական աշխատանքային հարաբերություններում՝ Մարքսն իր մոտեցմամբ ընդգծում է, որ օտարումը բազմակողմանի և խորը խնդիր է:

4. Վեբերի, Դյուրգհեյմի և Ֆրոմի ժամանակաշրջան

Օտարման հայեցակարգը կարևորություն է ձեռք բերել սոցիալ-հոգեբանական մոտեցմամբ: Մ. Վեբերն այն սոցիոլոգներից է, որ աչքի է ընկնում օտարման վերաբերյալ իր հայացքներով: Ըստ Վեբերի՝ կապիտալիստական տնտեսական հասարակարգը սահմանում է տիրույթ, որը ստիպում է անհատներին համապատասխանել առևտրային հարաբերություններին այն տարածքում, որտեղ նրանք ծնվել են: Եվ քանի դեռ անհատները առևտրային փոխհարաբերությունների մեջ են, նրանք պետք է հետևեն առևտրի կանոններին, և այս իրավիճակը անհատներին կանգնեցնում է համապատասխանության դժվարությունների առջև **[19]**: Էմիլ Դյուրգհեյմը օտարումն ուսումնասիրում է այլ տեսանկյունից և նույն տեսանկյունից ուսումնասիրում այն անոմիայի հասկացության միջոցով, թեև նա չի օգտագործում այս տերմինը: Ըստ Դյուրգհեյմի՝ այն փաստը, որ աշխատանքի բաժանումը չի ստեղծում համերաշխություն, իսկ բիզնես գործընթացների միջև հարաբերությունները թույլ են, կարող է անորոշություն ստեղծվել անհատների վարքագծում: Անոմիան կարող է մեծացնել սոցիալական տարբերությունը և, որպես հետևանք, արագացնել օտարումը **[8]**: Է. Ֆրոմը, պնդում է, որ կյանքի և մահվան միջև ընտրությունն այն խնդիրն է, որը մարդն իսկապես պետք է վերծանի: Ըստ Ֆրոմի, շատ մարդիկ չեն անում այս ընտրությունը և, հետևաբար, դառնում են դժբախտ. կյանքին դիտարկելով որպես բեռ: Ֆրոմը նշում է, որ աշխատողները, հատկապես սպասարկման ոլորտում, հաճախ ավելի շատ օտարման զգացողություն են ունենում, քան որակավորում ունեցող աշխատողները: Այն փաստը, որ որակավորում չունեցող աշխատողն ավելի հնազանդ է, քան որակավորված աշխատողը, կարող է առաջացնել օտարում: Ֆրոմը նաև նշում է, որ օտարումը տարածվում է հասարակության բոլոր շերտերի վրա, և այս իրավիճակն անխուսափելի է **[10, 11, 12]**:

5. Արդի ժամանակաշրջան

Այսօր օտարում հասկացությունն ընդունվել է որպես ապրելու անխուսափելի երևույթ, և դրան անդրադարձել են գիտնականները այս գաղափարի շրջանակներում: Ամերիկացի գիտնական Հ. Մարկուզեն (1898–1970) նշել է, որ ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ աշխատավոր դասակարգը կորցրել է օտարմանը վերջ դնելու ունակությունը: Մարկուզեն ընդգծել է, որ հատկապես օտարման խնդիրների հաղթահարման ժամանակ անհրաժեշտ է կենտրոնանալ հասարակության մարգինալ շերտերին, ոչ թե աշխատավոր դասակարգի: Ըստ Մարկուզեի՝ օտարումից ազատվելու միակ միջոցն այն է, որ յուրաքանչյուր մարդ կարողանա օգտագործել իր բանականությունը և գիտակցի, որ բոլորը հավասար են իրենց բանականության ուժը գործադրելու հարցում **[5, 6]:** Ք. Ռայթ Միլսը ժամանակակից շրջանի ձգնաժամը գնահատում է այլ տեսանկյունից, քան Մարկուզեն: Ըստ Միլսի, օտարումը դիտվում է որպես անհատի սեփական ներուժի չբացահայտված հնարավորության գործնականում կիրառելու անառողջ արդյունք **[16]**: Ամերիկացի սոցիոլոգ Մ. Սիմենը սոցիալ-հոգեբանական հետազոտությունների հիման վրա առանձնացրել է օտարման հինգ հիմնական չափորոշիչ՝ անզորություն, անիմաստություն, կանոնների

բացակայություն, հեռավորություն շրջապատից և ինքնաօտարում **[23]**:

Օտարման պատճառները

Ուսումնասիրելով օտարման հայեցակարգի հիմքում ընկած պատճառները՝ այն կարելի է ամփոփել ըստ հետևյալ հիմնական բաժինների՝ ընտանեկան դաստիարակություն և շրջակա միջավայր, մշակութային փոփոխություններ, համոզմունքներ, արժեքապահանջմունքային համակարգ, տնտեսական և ինստիտուցիոնալ աճ, ժամանակակից հասարակության կառուցվածք, ժամանակակից տեխնոլոգիաների փոխակերպումներ:

Ընտանեկան դաստիարակություն և միջավայր

Անձի անհատականության զարգացման և նորմայում ձևավորվող վարքային գործընթացում մեծ նշանակություն ունի ընտանիքի, կրթության և միջավայրի ազդեցությունը: Եթե ընտանիքը, կրթությունը կամ միջավայրը չկարողանան լիարժեք կատարել իրենց պարտականությունները, այս իրավիճակը կարող է առաջացնել անձի զարգացման նորմայից շեղումներ և վարքագծի խնդիրներ **[1]**:Անհատը ծնվելու պահից որոշակի վարք է ձևավորում՝ կրելով իր ընտանիքի և սոցիալական միջավայրի ազդեցությունը: Եթե անհատի ընտանեկան կամ սոցիալական միջավայրը անհամատեղելի է հասարակության հետ, դա կարող է դժվարացնել նրա հարմարվողականությունը, և արդյունքում անհատը կարող է օտարանալ՝ հեռու մնալով հասարակությունից: Այդ իսկ պատճառով կարևոր դեր է խաղում այն կրթությունը, որը ստանում է անհատը օտարումից խուսափելու համար: Այս համատեքստում, կենսականորեն կարևոր է, որ ընտանիքը, կրթությունը և շրջակա միջավայրը գործեն առողջ, որպեսզի անհատը պաշտպանված լինի օտարումից: Այն փաստը, որ կրթական գործընթացն աջակցում է անհատի ինտեգրմանը հասարակությանը և հաշվի է առնում սոցիալական նորմերը, կարող է նվազեցնել օտարման ռիսկը:

Մշակույթ

Մշակույթը ներառում է հմտություններ, փորձ, մեթոդներ, ավանդույթներ, սովորույթներ, արժեքներ և համոզմունքներ, որոնք ձեռք են բերվել հասարակության և միջավայրի հետ համակեցության գործընթացում **[22]**: Երբ անհատը սեփական գիտելիքներից և փորձից անցնում է բոլորովին այլ միջավայր կամ մշակույթ, նա կարող է բախվել հարմարվողականության խնդիրներին: Նրանք, ովքեր կարող են հաղթահարել հարմարվողականության խնդիրները, կարող են արագ ինտեգրվել հասարակությանը, մինչդեռ մյուսները կարող են հակված լինել օտարմանը: Այս պայմանը սովորաբար առաջանում է այն փաստից, որ անհատը գիտակցում է իր ընտանիքից և իր անմիջական շրջապատից սովորած մշակույթի և հասարակության մշակույթի միջև տարբերությունները: Անհատը կարող է օտարանալ միայն այն դեպքում, երբ մերժի այն մշակույթը, որտեղ գտնվում է: Այս հանգամանքները կարող են պատճառ հանդիսանալ, որ անհատը հեռանա հասարակությունից **[22]**:

Տնտեսական աճ

Է. Ֆրոմը ուշադրություն հրավիրեց այն փաստին, որ տնտեսական զարգացումները ի հայտ են բերում սոցիալական նոր կերպարներ: Տնտեսական աճը կարող է մեծացնել տիրելու, գերակայությունը, շահույթ ստանալու

հավակնությունները: Այս վիճակը կարող է հանգեցնել օտարման փորձի՝ ազդելով անհատի եզակի լինելու և իր ներուժն օգտագործելու կարողության վրա: Եթե անհատը չկարողանա հարմարվել տնտեսական և քաղաքական փոփոխություններին, նա կարող է իրեն անզոր զգալ և հակված լինել հեռու մնալ հասարակությունից, ինչը կարող է հանգեցնել օտարման **[10, 11, 12]**:

Օտարման հետևանքները

Օտարման առաջացման հետ մեկտեղ ի հայտ են եկել բազմաթիվ հետևանքներ: Օտարման հետևանքները պատճառ են դառնում որոշ անձնային փոփոխությունների:

Օտարված անձանց ընտանեկան, գործնական կյանքում և սոցիալական հարաբերություններում իմաստալից և ջերմ կապեր հաստատելու անկարողությունը կարող է հանգեցնել նրանց միայնակության և հոգեկան հանգստության կորստի: Կարող է մոլորեցնող լինել առողջ մարդկային վարքագիծ ակնկալելու այն անհատներից, ովքեր իրենց օտարված են զգում: Այս անհատները հաճախ հակված են լինում անհանգստության: Միևնույն ժամանակ, նրանք, ամենայն հավանականությամբ, տարբեր իրավիճակներ կարող են դիտարկել այլ տեսանկյուններից, որի հետևանքով էլ սխալ որոշումներ կայացնեն:

Օտարման ակնհայտ հետևանքներից մեկն այն է, որ անհատները հեռանում են սոցիալական հարաբերություններից: Ընտանիքն այս իրավիճակում առաջին տեղում է: Անհատը, ով չի կարող առողջ հարաբերություններ հաստատել, կարող է պարփակվել:

Օտարման գործընթացը կարող է պատճառ դառնալ, որ անհատը կորցնի կյանքի նպատակները և անտարբեր դառնա կյանքի նկատմամբ: Այս բացը լրացնելու համար անհատը կարող է դիմել ալկոհոլի և թմրանյութերի գործածությանը, ավելի ծանր իրավիճակներում նույնիսկ ունենա ինքնասպանության հակումներ: Կա սերտ փոխկապվածություն անկանոն կյանքի և շրջակա միջավայրի ազդեցության միջև: Երբ անհատը տեսնում է շրջապատի կողմից անարդար, կոպիտ, կեղծ, անհետևողական, անհանդուրժող վերաբերմունք, նա կարող է ընդունել այդ վարքը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում, համացանցի միջոցով շփման ակտիվացումը նույնպես նպաստում է իրական շփումից խուսափելուն:

Եզրակացություն

Հեգելը օտարումը ներկայացրեց նոր ընկալմամբ, որպես սոցիալական խաթարման հետևանք: Մարքսը նույնպես առաջ էր քաշում նույն տեսակետը, բայց նա կապիտալիզմն ընկալում էր որպես օտարման առաջացման հիմնական գործոն: Նրա համար անհատի ներքին կարիքների չբավարարումը կարող է հանգեցնել աշխատանքից, արտադրանքից, գործընկերներից և նույնիսկ սեփական անձից օտարվելուն: Ի տարբերություն Մարքսի՝ Վեբերը կապիտալիզմն ընկալում էր որպես օտարման միջոց: Դյուրգհեյմը օտարումն անվանեց անոմիա: Նրա համար չափազանց շատ նորմերի առկայությունը, որոնց պետք է հետևել, կարող է հանգեցնել անոմիկ զգացողության:

Սիմենը մշակել է օտարման հայեցակարգը ֆենոմենի մասնատմամբ,

որոնք կոչվում են անզորություն, անիմաստություն, ինքնաօտարում, սոցիալական մեկուսացում և մշակութային օտարում: Սիմենը զարգացրեց օտարումը որպես մի երևույթ, երբ անհատին անհասկանալի են իրեն համոզմունքները շրջակա աշխարհի մասին, նա անկարող է որոշումներ կայացնել և, հետևաբար, չի կարող կանխատեսել իր վարքի հետևանքները: Մեծ անհրաժեշտություն կա բացահայտելու այն գործոնները, որոնք հետևում են անհատների օտարման զգացողություններին, որպեսզի բացահայտվեն մարդկային ներուժի չռեալիզացված գործոնները, որոնք հետևաբար ազդում են մարդու զարգացման վրա: Սիմենի մոդելը կարող է լինել վերլուծության կենսունակ սխեման՝ հասկանալու համար մարդկանց այն վիճակը, որը կոչվում է օտարում:

Վերջաբան

Օտարման բոլոր տարբերակները այս կամ այն կերպ փոխկապակցված են միմյանց հետ: Ըստ Ֆաուսսեի նրանք կարող են ձևավորել պատճառահետևանքային շղթա, որտեղ օտարման մեկ կամ մի քանի տեսակներ հակված են առաջացնել մյուսները: Անզորության և անիմաստության համակցումը շատ հավանական է՝ մեկուսացման կհանգեցնի **[9]**: Մարդիկ, որոնք քիչ են վերահսկում նպատակին հասնելու գործոնները, որոնք չեն հասկանում, թե որն է իրենց նպատակը և որոնք կարծում են, որ նպատակին հնարավոր չէ հասնել առկա միջոցներով, ունենում են հիասթափություններ, հետևաբար, նաև օտարման զգացողություն: Մոտիվացիոն տեսանկյունից հիմնական կարիքների հիասթափությունը կարող է հանգեցնել օտարման **[7]**: Բախվելով սեփական նպատակների և այդ նպատակներին հասնելու սոցիալական հաստատված նորմերի միջև տարանջատմանը՝ անձը, առանձնանալով հասարակության նորմատիվ համակարգից, որպես հետևանք, օտարվում է ինքնիրենից:

Սոցիալ-հոգեբանական օտարումը բարդ խնդիր է, որը պահանջում է մասնագիտական ուշադրություն և աջակցություն: Այն հաղթահարելու համար անհրաժեշտ է ոչ միայն անհատի, այլև հասարակության մասնակցությունը և համագործակցությունը: Օտարման հոգեբանական ու սոցիալական ասպեկտները բարդ և բազմօրինակ են: Դրանք փոխկապակցված են, և արդյունավետ հաղթահարման համար անհրաժեշտ է հաշվի առնել թե՛ հոգեբանական, թե՛ սոցիալական գործոնները: Հասարակության աջակցությունը, կրթությունը և հոգեբանական օգնությունը կարող են արդյունավետ նվազեցնել օտարման ազդեցությունները: Ինչպես տեսանք, այս խնդիրը հանգեցնում է բազմաթիվ պատճառների և հետևանքների, որոնք կարող են լինել ինչպես անհատի, այնպես էլ հասարակության մակարդակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Алмазов Б.Н. Психология социального отчуждения: учебник для вузов/ Б.Н.Алмазов.— 2-е изд.., перераб. и доп.— Москва: Издательство Юрайт, 2025.— 172 с.— (Высшее образование).— ISBN 978-5-534-09722-1. — Текст: электронный // Образовательная платформа Юрайт [сайт]. — URL:https://urait.ru/bcode/565441
2. Райгородский Д. Я. Менеджмент.Психология деловых конфликтов. Издательство Бахрам-М 2007. 768 с.
3. Blauner R. Alienation and freedom: The factory worker and his industry. Chicago: University of Chicago Press. 1964.

4. Byrne J. P., Creese J., McMurray R., Costello R. W., Matthews A., & Humphries N. Feeling like the enemy: the emotion management and alienation of hospital doctors. Frontiers in Sociology, 8. 2023, https://doi.org/10.3389/fsoc.2023.1232555
5. Ceylan A. & Sulu S. Organizational in justice and work alienatαon. Ekonomika a Management, vol. 2, 2011, pp. 65–78.
6. Dean D. G. Alienation: Its meaning and measurement, American Sociological Review, 26, 1961, pp. 753–758.
7. Díaz-Guerrero R. Interpreting coping styles across nations from sex and social class differences. Journale Internationale de Psicologie, 8, 3, 1973, pp. 193–203
8. Durkheim E. Anomie and suicide. In L. A. Coser & B. Rosenberg (Ed.) Sociological theory 1976, (pp. 415–424). New York: Macmillan
9. Faunce W. A. Problems of an industrial society. New York: 1981.
10. Fromm E. Escape from Freedom. New York: Avon. 1941.
11. Fromm E. The sane society. New York: Rinehard and Winston. (1955.
12. Fromm E. Marx's concept of man. New York: Frederick Ungar. 1966.
13. Festinger L. A Theory of Social Comparison Processes (1954).
14. Jaeggi R. Alienation, Columbia University Press, 2014. ProQuest Ebook Central, http://ebookcentral.proquest.com/lib/ub-wuerzburg/detail.action?docID=1643202.
15. Marx K. The notion of alienation. In L. A. Coser & B. Rosenberg (Ed.) Sociological theory, 1976. (pp. 397–401). New York: Macmillan.
16. Mills C. Oxford University Press,Apr 13, 2000–Social Science–256 pages
17. Reinsberg B., Stubbs T., & Bujnoch L. Structural adjustment, alienation, and mass protest. The Concept of Alienation and Alienation in Organisations 223. Social Science Research, 2023. pp. 109. https://doi.org/10.1016/j.ssresearch.2022.102777
18. Rosenberg (Ed.) Sociological theory (pp. 415–424). New York: Macmillan.
19. Sarfraz H. Alienation: A Theoretical Overview, Pakistan Journal of Psychological Research, Vol. 12, Nos. 1–2, 1997, 45–60 https://www.researchgate.net/publication/271522454
20. Schacht R. The Future of Alienation. Urbana: University of Illinois Press, 1994
21. Schaff A. Alienation as a Social Phenomenon. Oxford: Pergamon, 1980
22. Schein E.H. Organisational Culture. American Psychologist, 43, 1990, pp. 109–119. https://doi.org/10.1037/0003-066X.45.2.109
23. Seeman M., on the meaning of alienation. American Sociological Review. 24 (6), 1959. pp. 783– 791.
24. Seeman M. Alienation and Anomie. In: Robinson, J., Shaver, P.R. and Wrightsman, L.S., Eds., Measures of Social Psychological Attitudes, Michigan University Press, East Lansing, 1991, pp. 291–371. https://doi.org/10.1016/B978-0-12-590241-0.50011-3
25. Sinitsyn Y. N., & Hentonen A. G. The system of prevention of destructive behavior of students in the process of formation of spiritual and moral culture. Perspektivy Nauki i Obrazovania, 63(3). 2023. https://doi.org/10.32744/pse.2023.3.31
26. Taylor A.J.P. Karl Marx, Frederick Engels: The Communist Manifesto, Penguin, Harmondsworth, 1967,
27. Tekin N. The contributions of the analysis of alienation to the social critique of labour in neoliberal capitalism. Journal of Classical Sociology, 23(3). 2023, https://doi.org/10.1177/1468795X231170398
28. https://velikanov.ru/philosophy/rassuzhdenie_o_proishozhdenii_i_osnovanijah_neravenstva_mezhdu_ljud'mi_russo.asp